


ՀԱՅ



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

63

5522

062

F-99

ՊԱՏՇՍՈՒԹՎՆՈՒԹԻՒՆ

ԵՒ

ԿԱՆՈՆԱԳԻՐ


ՊՈՒԲՔԵՇԻ ԱԶԴԱՅԻՆ ՏՈՒՐՔԵՐՈՒԻ  
ՅԱՆՉԱԺՈՂՈՎԻՆ

Թաղական խորհրդարանը գումարուած 1921 դեկտ. 18  
ին առակարգ ժողովին մէջ, Եկեղեցւոյ թաղականու-  
թեան, Ազգային վարժարանի Հոգաբարձութեան, Աղքա-  
սախնակ ընկերութեան, Հ. Կ. Խաչի Պուերեի Վարչու-  
թեպէն և Հայ Արքայինամ Յանձնաժողովի Պուերեի  
Մասնանիւդի ատենապետերու և լիազօրուած անդամ-  
ներու կողմէ ստորագրուելով և կնիւելով վաւերաց-  
ւած է:



1922

ՏՊ. «ՄԱՍԻՄ» ՊՈՒԲՔԵՇԻ



2001

ՊԱՏՇԱՈՒՅԱՆՈՒԹԻՒՆ

F-99

ԵՒ

ԿԱՆՈՆԱԳՐ

ՊՈՒԲԼԻԿԵՐ Ա.ԶԴԱՅԻՆ ՏՈՒՐՔԵՐՈՒ

ՅԱՆՉՆԱԺՈՂՈՎԻՆ

Թաղական խորհրդարանը գումարուած 1921 դեկտ. 18  
ին արտակարգ ժողովին մէջ, Ելեղեցւոյ թաղականու-  
րեան, Ազգային վարժարանի Հոգաբարձութեան, Աղքա-  
սախնամ ընկերութեան, Հ. Կ. Խաչի Պուրքէի Վարչու-  
թեան և Հայ Ուրբախնամ Յանձնաժողովի Պուրքէի  
Մասնանիւդի ատենապետներու և լիազօրուած անդամ-  
ներու կաղմէ սուրագրուելով և կնուելով վաւերաց-  
ւած է:



8040

1922

ՏՊ. «ՄԱԿԱՐ» ՊՈՒԲԼԻԿԵՐ

2930-57 Ա.Հ.

• • 46

29030-268

ՊԱՏՃԱՌԱԲՈՒԹԻՒՆ  
(EXPOSÉ DES MOTIFS)

Կանոնադրի ծրագիրը (Projet du Règlement) դու  
այսօր ձեզ կը ներկայացնեմ, կոչուած է մայրաքաղաքիս կրօնական, մշակոյթային և ազգային բարեգործական կազմակերպութեանց մէջ առաջդիմութեան նոր թուականի մը սկիզբը դնել:

Հաստատ եւ ուղղակի տուրքերու վրայ հաստատ ւած ընդհանուր պիտոնէ մը, որ պիտի պահպանէ եւ մատակարարէ կրօնական, կրթական, ընկերային և ազգային բոլոր հաստատութիւնները, շատ ժամանակէ վեր նկատուած եր իր հրամայական անհրաժեշտութիւն մը:

Պուգրէշի ազգային տուրքերու կիրարկելի կանոնադրի պարասատութիւնը նպատակ ունի հիմնաւորել ույն ընդհանուր պիտոնէն, գորացած հայ գաղութի բոլոր ազգայիններու անհստական, ուղղակի եւ համեմատական տուրքերէն:

Անօգուտ պիտի ըլլար չատ պնդել—դժբաղդաբար դեռ ացժմէական—Եկեղեցւոյ, Պալրոցի, ընկերային օգնութեան, եւ Հ. Կ. խաչի մատակարարումի արդի դրութեան մասին:

Սոյն դրութիւնը՝ ինքնին նուաստացուցիչ եւ գուրկարժանապատութենէ կամփոփուի մուրացկանութիւն բառին մէջ:

Օրինակի համար, Եկեղեցւոյ վարչութեան եւ մաս-



(2661)  
47

9 (10446-58)

կարարութեան համար, թաղականութիւնը, այսպէտ  
ասած, — եթէ ներելիք է այսպէս ըսել — մայրա-  
քաղաքիս ազգայիններու մէջ դրամահաւաքում մը  
կատարելու շրջէր:

Ճամբան առաջին հանդիպողները, թաղականաց տու-  
ներուն աւելի յօտ բնակողները, բարեգործական յար-  
ձակումներու ամենէն շատ ընդունակ ճանչցուածները  
առաջին և մշտակայ յարձակումի ենթակայ կ'ըլլային:  
Ոչ մէկ լուրջ չափանիշ, գործնական կաղմակերպուած  
ոչ մէկ դրութիւն՝ իրը հիմք կը ծառայէր սոյն հաւա-  
քումներուն:

Օրինակի համար, թաղականութիւնը՝ որ առաջին ան-  
գոմ կը կատարէր իր հաւաքումը, խիստ կարեւոր  
գումար մը գանձելու բախտը կ'ունենար, դժբախտա-  
րար աւելի վերջ եկողը, դպրոցի, Հ.Կ. խաչի, Աղքատա-  
խնամի եւ Որբախնամի վարչութիւնները աւելի չոր-  
շահագործուած, հիւծած, եւ շատ անգամ զզուելի գե-  
տին մը կը գտնէին:

Սնչուշտ, որ այս պայմաններով՝ գործադրուած մի-  
ջոցներու մէջ, արժանապատուութեան կատարեալպա-  
կասի կողքին, այս նուաստացուցիչ դրութիւնը՝ զեռ  
ուրիշ թերութիւն մ'ունէր, այն վարչութիւնը՝ որ հաւա-  
քումին մէջ ուրիշէն ետքը կ'ուզար, եկամուտի խիստ  
գեղջուած պիտածէի մը կենթարկուէր, որ յիրաւի խիստ  
քննդատելի կացութեան մը կը մատնէր համապատաս-  
խան հաստատութիւնը:

Նոյքան ուրիշ խոշոր թերութիւն մէր եւ այն, որ  
ժամանակի մեծ զոհողութիւն մը կը պահանջուէր վար-  
չութիւններէն՝ հաւաքումներ կատարելու համար, որ  
ոչ մի ժամանակ գոհացուցիչ արդիւնք կրնար տալ, որ-  
շափ որ մեծ լլար վարչութիւններու բարեացակամու-  
թիւնը, անոնք հարաւորութիւն չէին ունենար, ամբողջ  
քաղաք մը շրջիւ, մայրաքաղաքիս բոլոր ացգայիննե-  
րը այցելու համար:

Մյլապէս, պէտք է դիմուալ, թէ կարելի չէ ամէն ժամ  
իր տունը գտնել ազգայինը, այնպէս որ անսնցմէ չա-  
տերը չայցելուած, կամ նոյն խել մէկ կամ երկիցս այ-  
ցելուած՝ ոչինչով կը մասնակցէին վարչութիւններու  
պիւտնէին:

Միւս կողմէն, ազգայիններու վճարելի տուրքի հաս-  
տատ չափանիշի մը չզոյտութենէն, կատարուած հաւա-  
քումները համեմատականի պակասով կը յատկանչուէին,  
յանախ սրտնեղիչ, ոմանք խիստ շատ, ուրիշներ շատ  
քիչ վճարելով, իրենց նիւթեական միջոցներու եւ կա-  
ցութեան համեմատութեամբ:

Դրութեան սնկատարութիւններէն իրը վերջին հե-  
տեւանք, իւրաքանչիւր վարչութեան պիւտնէի անա-  
պահովութիւնը և փափոխականութիւնը կառաջանար, ո-  
քոնք ոչ մէկ անդամ կրնային հաստատ գումարի մը վրայ  
հիմնուիլ, որ ապահովէր համապատասխան հաստատու-  
թեանց դոյցութիւնը եւ բնականոն դործունէութիւնը:

Նոր գրութիւնը զոր կառաջարկեմ, Աղջ. տուրքե-  
րու Յանձնամուգովի պաշտօնավարութիւնովը մեր վար-  
չութեանց գործունէութեան տիսուր էջը կը փակէ,  
վերջ գնելով բոլոր անպատշաճութեանց:

Անհատական ուղղակի և համեմատական տուրքի  
գրութիւնը պիտի հաստատուի մայրաքաղաքիս ամբողջ  
հայ ժողովուրդի ճշգրիտ վիճակադրութեան, վրայ: Ան  
կը ջնջէ հաւաքումը, պարտաւորցնելով հայ դադութի  
ամէն մէկ անդամը աղքատ կամ հարուստ, որ համե-  
մատականի և իր միջոցներու չափովը մտնակցի մեր  
կրօնական, կրթական բարեգործական ընկերային կամ  
ազգային հաստատութեանց պահպանմանը, եւ բարեոք  
մատակարարութեանը:

Ան կը ջնջէ վարչութեանց տիսուր եւ շատ անդամ  
անստոյդ պաշտօնները, պնակով շրջելու ազգայիննե-  
րու մէջ, հաւաքելով մէկ երկու պան, զոր ազգայինը՝  
մէծ համութեամբ պիտի տար աւելին՝ արժանաւոր ե-

դանակով խնդրուած, մանաւանդ թանկադին ժամանակ մը վատնելով, զոր շատ աւելի օգտակար կերպով պիտի գործածէին իրենց խնամքին յանձնուած հաստատութիւններու բարւոք մատակարարութեան համար:

Նոր դրութիւնը՝ վարչութիւններուն կ'ապահովէ հաստատ պիտածէ մը, որ նայելով պահանջն՝ կրնայ աւելնալ, հնարաւորութիւն ընծայելով հաստատութիւններուն՝ որ իրադորձեն ժամանակի առաջդիմութեանց հարկ դատած բոլոր պահանջները, եւ անոնց ապագայ դարձացումը:

Սոյն դրութիւնը՝ մէկ կողմէն ազգային բոլոր հաստատատութեանց շահերը ներդաշնակելու յամկութիւնը ունի, միւս կողմէն մէծ առաւելութիւննունի, որ սեղմ և հարազատ համերաշխութիւնով մը, ազգայիններու միջն ընկերային դաստիարակութեան համանընման զգացումը կարծարձէ, որ ազգային զգացումը զարդացնելու հիմտկան ազգակը կր կազմէ:

Այսպէս, որդեգրուելիք նոր դրութիւնովը, վարչութիւնններու, եւ ազգային ներկայացուցչական կազմակերպութիւնններու վրային կառնուի ամենամեծ եւ սակայն հետապնդուած նպատակին համար ամենաքիչ օգտակար բեռը, այն է կամաւոր հանգանակութիւնը կամ հաւաքումի գործը. ի փոխարէն՝ անոնց ընծայելով աւելի մէծ արժանապատութիւն մը, թողով անոնց ամբողջ նեղինակութիւնը եւ ինքնավարութիւնը իրենց վարած հաստատութիւններուն վարչութեան եւ մատակարարութեան գործին մէջ, տալով անոնց միեւնայն ատեն նոր հուանդ աշխատելու համար, սոյն հաստատութիւնները ամէն տեսակէտով զարգացնելու եւ ներկայ վիճակին շատ աւելի բարձր մակարդակի մը հասցնելու համար:

Տեղեկաբեր (Reporteur  
ԱՐՄԵՆԱԿ ՄԱՆԻՍԱԼԵԱՆ

## ԿԱՆՈՆԱԳԻՐ

### RÉGLEMENT

Պուերէսի ազգային սաւբերու Յանձնաժողովի ներկայ կանոնագիրը Թաղական խորհրդարանը գումարուած 1921 Դեկտեմբեր 18ին արտակարգ ժողովին մէջ, Եկեղեցոյ Թաղականութեան, ազգային վարժարանի հոգաբարձուրեան, աղբատախնամ ընկերութեան, Հ. Կ. Խաչի Պուերէսի Վարչուրեան եւ Հայ Որբախնամ Յանձնաժողովի Պալերէսի մասնաճիւղի ատենապետեառուն եւ լիազօրուած անդամներուն կողմէ սուրագրուելով եւ կնքուելով վաւերացուած է:

Յօդուած 1. — Պուերէսի մէջ կը հաստատուի Յանձնաժողով մը. Պուերէսի ազգային սաւբերու Յանձնաժողով անունով :

Սոյն Յանձնաժողովի առմամեայ կեղրոնաւեղին է Աղզային վարժարանը. Պուերէսի Թարոլ թիւ 27 :

Յօդուած 2. — Աղզային Տուրքերու Յանձնաժողովը պիտի բաղկանայ Պուերէսի մէջ գոյ եղող հետեւալ հաստատութիւնը 9 ներկայացուէիչներէն, այսպէս.

3 անդամներ Եկեղեցւոյ Թաղականութենէն  
3 » Հայ Որբախնամ Յանձնաժողովը Պուերէսի Մասնաճիւղէն :

1 անդամ Աղք. Վարժարանի Հոգաբարձութենէն :

1 » Աղքատախնամ Բնկերութենէն

1 » Հ. Կ. Խաչի Պուքըէջի Վարչութենէն :

Այս Յանձնաժողովը պիտի ընտրէ իր ծոցէն մէկ Նախագահ, մէկ Փոխ-Նախագահ, մէկ Քարտուղար և մէկ Գանձապահ :

Յանձնաժողովի անդամները ոչ մի փոխարինութիւն, կամ ներկայութեան վճարում պիտի ստանան, իրենց պաշտօնները պատւակալ են :

Յօդուած 3. — Աղք. Տուրքերու Յանձնաժողովի ո՛ւ և անդամը, այնքան ժամանակ Յանձնաժողովին կրնայ մասնակցի, որքան ատեն որ տեւէ Յանձնաժողովի մէջ իր ներկայացուցած հաստատութեան իրեն արուած Մանտար — պաշտօնը. իր Մանտաթը լրացած ատեն, կամ իր կերկայացուցած հստատութենէն հրաժարած պահուն, անիկա պարտաւոր է Աղք. տուրքերու Յանձնաժողովի իր անդամակցութենէն եւս հրաժարի:

Յօդուած 4. — Յանձնաժողովը՝ շարաթը մէկ անդամ նիստ պիտի զումարէ, կամ որշափի անդամ ո՛ւ Նախագահն ժողովի հրաւիրէ. ան՝ անդամներու մէծամասնութիւնով նիստ զումարելով, ընթացիկ խնդիրները կը լուծէ, միշտ անդամներու մէծամասնութեամբ տալով որոշումները:

Յանձնաժողովի բոլոր որոշումները կ'արձանագրուին արձանագրութեան տետրակի ո՛ւ մէջ. ատենագրութիւնները կ'ատորագրուին ներկայ եղող անդամներու կողմէն:

Յօդուած 5. — Աղք. տուրքերու Յանձնաժողովի (Պուքըէջի) նպատակն է կանոնաւորել պայմաններու

(ձուի) տուրքերը, չնջելով մինչ այժմ գոյ եղող հաւաքումի դրութիւնը, հաստատուն եւ համեմատական տուրք մը հաստատելով իւրաքանչիւր աղքայինի վրայ նիւթական վիճակին համեմատութեամբ:

Այս եղանակով հաւաքուած գումարը պիտի ծառայէ Եկեղեցւոյ, Դպրոցի: Հայ Որբերու, Աղքատաց, Հ. Կ. Խաչի և Հայաստանի սովեալներու կամ պատերազմի արկածեալներուն պահպահման, բարելաւման և օգնութեան համար:

Յօդուած 6. — Այս յանձնաժողովը՝ երկու ուրիշ ենթարանձնախումբեր պիտի ընտրէ, Գնաճատիչ մասնախումբ, և Դատական յանձնախումբ անունով:

Յօդուած 7. — Գնաճատիչ մասնախումբը 9 անդուներէ պիտի բաղկանայ զանազան ճիւղերէ ընտրուած, որ ժողով գումարելով, իւրաքանչիւր աղքայինի (ձուի) նիւթական վիճակը պիտի գնաճատէ, տուրքի հետեւեալ երկու թուանշանները որոշելով:

ա) Միանուագ մեծ գումար մը, զոր պարտաւոր է վճարել իւրաքանչիւր աղքային մէկ անգամի համար, ներկայ կանոնագիրը գործադրութեան դրուելէ ետք:

բ) Գումար մը, զոր պարտաւոր է վճարել ամսական:

Յօդուած 8. — Գնաճատիչ յանձնախումբի տեղեկագրին համաձայն աղքային տուրքերու Յանձնաժողովի գրասենեակը տպագրուած հարկացուցակ մը լեցնելով՝ անոր մէջ մասնաւորաբար պիտի որոշէ այն հաստատուած տուրքերը, զորս հարկատուն պարտի վճարել միանուագ եւ ամսական:

Յօդուած 9. — Գնահատիչ յանձնախումրի գնահատած գումարին վրայ, Յանձնաժողովի գրասենեակը հարկառուին վճարելիք միանուագ և ամսական գումարները բաժնելով հետեւեալ կերպով. պիտի յատկացնէ.

- ա) 40 % Պուքրէշի ազգ. հաստատութեանց օդտին  
բ) 30 % Հայ որբերու օդտին  
գ) 30 % Հայաստանի սովետաներուն կամ պատերազմի աղետեալներու օդտին:

Գրասենեակը գործադրելու համար, ենթադրենք թէ աղդային մը գնահատիչ մասնախումրին կողմէ գնահատուած է 1000 լէյ միանուագ, և 100 լէյ ամսական, Գրասենեակը պիտի կտզմէ հետեւեալ բաժնումները:

	լ.է.
Պուքրէշի ազգ. հաստատութեանց օդտին միանուագ	400
» » » ամսական	30
Հայ որբերու (Որբին, յանձ. Պքրէշի մանձղ.) միանուագ	300
» » ամսական	30
Հայաստանի սովետաներու են. օդտին միանուագ	300
» » ամսական	30
<hr/> 4100	

Յօդուած 10. — Դատական յանձնախումր, որի ըստ բազկանայ 7 անդամներէ, ազգ. տուրքերու յանձնաժողովի կողմէն զանալան ճիւղեր ներկայացընողներէ կ'ընտրուի և գնահատիչ մասնախումրի կողմէ դրուած տուրքերուն դէմ, աղդայիններու ունեցած բողոքները պիտի քննէն գատի:

Յօդուած 11. — Հարկառուն՝ իր բնակարանը զրկուած հարկացուցակի միջոցաւ, իր վրա, դրուած տուրքին ծանօթանալէն ետք, հարկացուցա

կը ստանալու թօւականէն՝ 15 օրուան պայմանաժամին մէջ, կրնայ բողոք ներկայացնել, դատական մասնախումրին:

Հարկառուն՝ հարկացուցակը ստանալէն 15 օրուան պայմանաժամին մէջ եթէ գրաւոր բողոք չներկայացնէ հարկի կ'ենթարկուի վերջնապէս, հարկացուցակի մէջ նախատասուած դումադներով:

Յօդուած 12. — Դատական մասնախումրը իր առաջին նիստին մէջ բողոքի առաջ բերած պատճառները ուսումնասիրելէ և քննելէ վերջ, առանձին կամ հարկառուի հետ համաձայնելով պիտի որոշէ գումարները, զորվերջնս պարաւոր է վճարել ընթացիկ տարւոյ շրջանին միտնուադ եւ ամսական, վերջնական որոշումը՝ մասնակցող բոլոր դատական խորհրդականներու կողմէ պիտի խմբագրուի և ստորագրուի, սարուագրուած սոյն որոշումը պիտի ներկայացուի Գրասենեակին՝ որ իր կարգին պիտի արձանագրէ հարկառուի վճարելիք վերջնապէս հաստատուած տուրքերը 9—երրորդ յօդուածի մէջ նշանակուած ցուցակին համաձայն,

Յօդուած 13. — Գնահատիչ մասնախումրը՝ հարկերը ո. րոշելու ամրող շրջանին նիստ պիտի գումարէ, իսկ դատական Յանձնախումրը՝ նիստ պիտի գումարէ ամէն կիրակի առաւօտ ժամը 10 — 1 կէսօր: Երկու յանձնաժողովներն ալ իրենց անդամներու մեծամասնութիւնով որոշում պիտի տան. թէ՝ գնահատիչ և թէ դատական յանձնախումրերու անգաները իրաւունք չունին ներկայ գտնուիլ երբ իրենց հարկերու որոշումը, կամ իրենց բողոքները կը քննուին:

Յօդուած 14. — Աղքայինները պիտի վճարեն իրենց տուրքերը վեցամսեայ կոմ եռամսեայ, ասոնք պիտի գանձուին աղդ. տուրքերու Պուքրէշի Յանձնաժողովի արտօնեալ գանձողին կողմէ իրենց բնակարանները, համապտասխան ընկալքքի փոխարէն, որ սոորազբուած է Գրասենեակի Կանձապահին և Մանձնաժողովի արտօնուած մէկ անդամին կողմէ:

Արտօնեալ գանձողի կողմէ, օրական գանձըւած գումարը, ոոյն օրը պիտի յանձնուի Պըրատօնեակի գանձապահին:

Գանձապահը գանձողին պիտի տայ համապտասխան անդորրազիր, Գանձողին պիտի վճարուի իր գանձումներուն վրայ 0/0 ին որոշ տոկոս մը:

Գրասենեակի գանձապահը՝ պէտք չէ 10 հազար լէյէն աւելի պսորասոս գրամ բանէ արկղին մէջ, ոոյն քանակին աւելի գումարները պէտք է յանձնէ աղդ. տուրք. յանձնաժողովի ընդհանուր գանձապահին, որ իր կարդին՝ Աղդ. տուրք. յանձնաժողովի կողմէ որոշուած դրամատան մը պիտի յանձնէ:

Գրասենեակի գանձապահը՝ յանձնաժողովի ընդհանուր գանձապահին իր յանձնած գումարի համար պիտի ստուայ համապտասխան ընկալքիրը:

Յօդուած 15. — Աղդ. տուրքերու յանձնաժողովի որոշած տուրքերէն դուրս, հարկատուն այլեւս պարտաւոր չէ ոչ ոքի վճարել ոչ մի տեսակ տուրք, ոչ մի ձեւի կամ անունի տակ, միայն ոոյն յանձնաժողովը՝ իրաւունք պիտի ունենայ Պուքրէշի աղքայիններու վրայ տուրքեր նշանակել:

Յօդուած 16. — Պուքրէշի աղդ. հաստատութեանց հաշւոյն աղդ. տուրք. յանձնաժողովի գանձած գումարներէն, պիտի լրացուի եկեղեցւոյ, գպրոցի պիւածէի բացը՝ հաւանաբար աղդ. տուրք. յանձնաժողովէն վաւերացուած, ինչպէս և Պուքրէշի Աղքամայինամ մարմնոյ իրեն ինկած բաժնին գումարը:

Նախապէս աղդ. տուրք. յանձնաժողովոյ գրասենեակի մատակարարութեան ծախքի բաժնը, եւ 0/0 20 պահեսաի գումար մը հանելէ ետք:

Յօդուած 17. — Եթէ վերը նախատեսուած գումարները լոցելէ ետք ո եւ է գումար աւելնայ, անով մամնաւոր Հիմնադրամ մը պիտի կազմուի Պուերենի աղքային Տան շինութեան (Casa National) համար:

Յօդուած 18. — Որբերու (Հ. Ռ. Յ. Պ. Մ.) հաշւոյն ինչպէս եւ Հայաստանի սովետներու եւ պատերազմի աղնաեալներու հաշւոյն դանձուած գումարներէն՝ աղդ. տուրք. յանձնաժողովի մատակարարութեան համար պարտաւորիչ ծախքերու իրենց բաժնները միայն զեղչերով, մասցած գումարները վերը յիշուած կազմակերպութիւններուն պիտի յատկացուին:

Յօդուած 19. — Աղդ. տուրքերու գրասենեակի կողմէ իրագործուած զանձաւմներու համեմատութեամբ, այս գրասենեակը զանազան հաստատութեանց բոլոր պահանջները պիտի գոհացնէ մասամբ կամ ամբողջովին որոնցյատկացուած են ոոյն գումարները, նախապէս աղդ. տուրքերու յանձնաժողովի վաւերացումը ստուալով:

Յօդուած 20. — Աղդ. տուրքերու յանձնաժողովի պահեստի գումարը պիտի կրնայ բացառիկ օգնու-

թիւն տալու ծառալել տեղական հաստատութեանց եւ տարւոյ ընթացքին մէջ չ'նախատեսւած, բայց իրապէս ճշգուած ծախքերը գոցերու համար:

Սոյն պահեոտի զումարը՝ ուրիշ նպատակի չի կրնար յատկացուիլ վերը նա սատեսուածին պէս, կը ծառոյէ միայն հարկաւոր հիմնադրամը աւելցնելու համար, Պուքքչի ազգ տանը շինորթեան համար:

Յօդուած 21. — Եկեղեցւոյ, Դպրոցի, Հ. Կ. Խաչի.

Աղք. Մարմնոյ, ինչպէս եւ Հայ Որբախանամի Պուքքչի մասն արդի Վարչութիւնք պիտի մընան իրենց պաշտօնավարութեան մէջ, վերապահութեամբ, որ անոնք իրենց պաշտօնները կատարեն համապատասխան հաստատութիւնները մատակարարելով միայն, առանց այլեւս դրամ հաւտքելու ազգայիններէն, պիտի կազմեն իրենց պիտմէն, զոր պիտի ներկայացնեն Ազգային տուրքերու Յանձնաժորովին, որ քննելէ յետոյ պիտի յատկացնէ իրենց հարկ եղած գումարը իրենց պիտմէն գոցելու համար:

## ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆՆԵՐ

Յօդուած 22. — Ամէն ազգային՝ որ խնդրի մը կամ շահի մը համար Հայ Հիւպատոսական կամ կրոնական իշխանութեանց կը ներկայանայ, պարտաւոր է Ազգ. Տուրքիյանձնաժորովի իր պարտաւորից վճարման վերջին ընկալագիրը ներկայացնել:

Յօդուած 23. — Այն ազգայինները՝ որոնք կանոնաւոր տուրքերու վճարման մէջ կ'ուզեն խուսափիլ, պիտի ենթարկուին հետեւեալ տնօրինութիւններուն:

ա) Անոնց անունները պիտի կախուին եկեղեցւոյ բակը

բ) Անոնք չի պիտի կրնան ոչ ընտրող եւ ոչ ընտրելի ըլլալ

շ) Անոնք պիտի զրկուին ներկայ եւ առաջիկայ այն բալոր առաւելութիւններէն, որոնցմէ կը օգտուին ուղղակի միւս ազգայինները, որոնք կը գործադրեն իրենց ընկերային, կրօնական, եւ մարդկային պարտականութիւնները:

դ) Անոնց պիտի մերժուին մկրտութեան, պատկի, եւ յուղարկաւորութեան ամեն տեսակ հանդիսաւորութիւն:

է) Անոնց անունները պիտի հաղորդուին նաև Պոլսոյ Պատրիարքարանին, որպէսզի սոյն կրօնական բարձր իշխանութիւնը հարկ եղած անօրինէ այնպիսիններու նկատմամբ:

Յօդուած 24. — Ներկայ Կանոնագիրը գործադրութեան դրուելու թուականէն, զոյ եղած վարչութեանց կողմէ կը գաղըի այլեւս ամէն տեսակի հաւաքում:





Dp

W.B.

00

0022310

2013

5522



NL0022710

